ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

*ՏԱՐՐԱԿԱՆ* հանրակրթական

(ծրագրի անվանումը)

*ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ*

ՍԵՐԻԱ Ա № 1064

Սույնով վավերացվում է, որ

<<ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11

(գտնվելու վայրը)

ք. Երևան, Հյուսիսային ճառագայթ 2

(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Տարրական** հանրակրթական

(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը)

*Ա. Աշոտյան*

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

«23» *սեպտեմբերի* 2013 թ.

*Անժամկետ*

(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

No 1764-Ա/2 «29» սեպտեմբերի 2022 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1118-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՎ «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐՎԱԾ ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ N 1064 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» հիմնադրամին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 23-ի ««ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» հիմնադրամին տարրական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 1118-Ա/Ք հրամանով տրված տարրական հանրակրթական ծրագրի իրականացման N 1064 լիցենզիան վերաձևակերպել և լիցենզիայում՝ հանել «ք. Երևան, Հյուսիսային Ճառագայթ 2» բառերը:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության պետ Ա. Արշակյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

9/29/2022

X

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129

**ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ**

**(պարտականությունները կատարող)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 1763-Ն/2 «29» սեպտեմբերի 2022 թ.

## «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐՐԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ), ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 792-Ա/Ք, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1118-Ա/Ք ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 869-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելվածներ NN 3-ի, 5-ի և 7-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի տարրական (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 192 տեղերի թիվը ավելացնել 6-ով, և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 23-ի ««Այբ

կրթական հանգույց» հիմնադրամին տարրական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 1118-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «192» թիվը փոխարինել «198» թվով:

2. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հիմնական (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 180 տեղերի թիվը ավելացնել 36-ով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 4-ի ««Այբ կրթական հանգույց» հիմնադրամին միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 869-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «180» թիվը փոխարինել «216» թվով:
3. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի միջնակարգ (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 240 տեղերի թիվը նվազեցնել 42-ով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հուլիսի 9-ի ««Այբ կրթական հանգույց» հիմնադրամին միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 792-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «240» թիվը փոխարինել «198» թվով:
4. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության պետ Ա. Արշակյանին:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

9/29/2022

X

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129

**ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ**

**(պարտականությունները կատարող)**